# «Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**Գ Լ ՈՒ Խ 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը սահմանում է աղետների ռիսկի կառավարման (աղետների ռիսկի նվազեցման, արձագանքման, վաղ վերականգնման, հետաղետային վերականգնման) գործընթացը և հիմքերը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, արտակարգ իրավիճակ հայտարարելու հիմքերը, պայմաններն ու կարգը,արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմի սահմանման հիմքերը և  Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների իրավասությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները:
2. 2. Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության իրավական ապահովման հիմքերն են` Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, միջազգային պայմանագրերը, սույն օրենքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ օրենքները և իրավական ակտերը:

**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները.**

1.Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները`

- **աղետ՝** համայնքի կամ հասարակության բնականոն գործունեությունը խաթարող երևույթի հետևանքով առաջացած իրադրություն, որը հանգեցրել է մարդկային զոհերի, նրանց առողջության վատթարացման, նյութական, տնտեսական և բնապահպանական կորուստների և այնպիսի հետևանքների, որոնց վերացումը գերազանցում է սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը.

**2) *աղետի գոտի՝*** *որոշակի տուժած տարածք, որի սահմաններում գրանցվել է աղետը:*

**3) աղետի ռիսկ՝** որոշակի տարածքում որևէ ժամանակահատվածում հնարավոր աղետ առաջացնող վտանգի ներգործության և խոցելիության հավանական չափն է՝ արտահայտված կյանքի, առողջական վիճակի, շրջակա միջավայրի, կենսաապահովման միջոցների, ունեցվածքի և ծառայությունների հնարավոր կորուստներով.

**4) աղետների ռիսկի նվազեցում՝** վտանգների բացահայտման, գնահատման, հնարավոր բացասական ազդեցության և բնակչության խոցելիության նվազեցման, և վտանգներին դիմակայելու միջոցառումների համալիր.

**5) աղետների ռիսկի կառավարում՝** պետության, համայնքի և հասարակության բնականոն գործունեության ապահովման նպատակով աղետների ռիսկի նվազեցմանը, օպերատիվ արձագանքմանն ու վերականգմանն ուղղված որոշումների ընդունման, իրականացման և վերահսկման հետևողական գործընթաց.

**6) *անհատական պաշտպանություն***՝ *մարդկանց ճառագայթային, քիմիական և կենսաբանական ներգործությունից անհատական պաշտպանական միջոցներով ապահովում.*

***7) անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ՝*** *առաջնահերթ աշխատանքներ՝ ուղղված մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող այնպիսի գործոնների ազդեցության վտանգի վերացմանը, որոնք խոչընդոտում են մարդկանց որոնելուն և փրկելուն, ինչպես նաև շենքերի, շինությունների ամրացմանը կամ քանդմանը, հեղուկ վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի և ջրի աղբյուրների վթարային անջատմանը, բնակչության ու փրկարարների կենսաապահովման առաջնահերթ կազմակերպությունների ժամանակավոր սխեմաներով վերականգնմանը, վերանորոգմանը և տարածքի սանիտարական մաքրմանը.*

***8)* առավել խոցելի խմբեր՝** հղիներ, կերակրող մայրեր, երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք  և հատուկ կարիքներ ունեցող անձինք (մանկատան երեխաներ, ծերանոցի բնակիչներ, հոգեկան առողջության պահպանման հաստատություններում բուժվող հիվանդներ, փախստականներ և այլն).

9**) արտակարգ իրավիճակ՝** իրադրություն, որն առաջացել է բնական, տեխնոլոգիական, վտանգավոր երևույթների, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի

տեսակների կիրառման հետևանքով, որը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, նրանց առողջության վատթարացման, նյութական կորուստների, շրջակա միջավայրի վնասման, և մարդկանց կենսագործնեության բնականոն պայմանների խախտման.

***10)*** **հանրապետական արտակարգ իրավիճակ՝** որի ազդեցության սահմանները դուրս են եկել մարզի (Երևան քաղաքի) տարածքից, և չեն տարածվել Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, կամ արտակարգ իրավիճակ առաջացնող աղբյուրի և (կամ) հետևանքների վերացման համար անհրաժեշտ է ներգրավել Հայաստանի Հանրապետության ուժերն ու միջոցները կամ առաջացել է միջազգային օգնությանը դիմելու անհրաժեշտություն.

**11) մարզային արտակարգ իրավիճակ՝** որի ազդեցության սահմանները դուրս են եկել համայնքի տարածքից, սակայն, չեն տարածվել տվյալ մարզի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի) տարածքից դուրս, կամ արտակարգ իրավիճակ առաջացնող աղբյուրի և (կամ) հետևանքների վերացման համար բավարար են տվյալ համայնքում կամ մարզում (Երևան քաղաքում) գործող պետական կառավարման համակարգի մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ուժերն ու միջոցները.

**12) համայնքային արտակարգ իրավիճակ՝** որի ազդեցության սահմանները դուրս չեն եկել համայնքի (բացառությամբ Երևան քաղաքի) տարածքից և արտակարգ իրավիճակ առաջացնող աղբյուրի և (կամ) հետևանքների վերացման համար բավարար են տվյալ համայնքի, համայնքի տարածքում գործող պետական կառավարման համակարգի մարմինների, կազմակերպու-թյունների ուժերն ու միջոցները.

**13) տեղային արտակարգ իրավիճակ՝** որի ազդեցության սահմանները դուրս չեն եկել կազմակերպության (օբյեկտի) տարածքից և արտակարգ իրավիճակ առաջացնող աղբյուրի և (կամ) հետևանքների վերացման համար բավարար են տվյալ  կազմակերպության ուժերն ու միջոցները.

**14)** ***արտակարգ իրավիճակներից պաշտպանություն՝*** *արտակարգ իրավիճակներից մարդկանց կյանքի և առողջության պաշտպանության, քաղաքացիների, պետության և այլ սեփականատերերի ունեցվածքի շրջակա միջավայրի, պատմամշակութային արժեքների պահպանության և բնականոն կենսագործունեության ապահովմանն ու վերկանգմանն ուղղված միջոցառումների համալիր.*

**15) արտակարգ իրավիճակի ռեժիմ՝** արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում Հայաստանի Հանրապետության որոշակի տարածքում կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումներով ուղեկցվող ժամանակավոր միջոցառումների ամբողջություն.

***16)*** **արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում՝** արտակարգ իրավիճակներում որոնողափրկարարական և անհետաձգելի

վերականգնողական աշխատանքների կատարում, մարդկանց կյանքի, առողջության ու գործունեության առաջնահերթ պայմանների ապահովում, բացասական գործոնների հնարավոր զարգացումների կանխում և կանխարգելում.

**17) բարձր ռիսկայնության օբյեկտ՝** մարդկային կուտակումներով վայր.

***18) բնակչության պաշտպանություն՝*** *արտակարգ իրավիճակում մարդկանց կյանքի և առողջության սպառնալիքների կանխմանը, նվազեցմանը, բնականոն կենսագործունեության ապահովմանը և վերականգմանն ուղղված իրավական, կազմակերպական, ինժեներատեխնիկական փախկապակցված միջոցառումների համալիր.*

***19) բնակչության պաշտպանության համակողմանի ապահովում՝*** *միջոցառումների համալիր՝ ուղղված բնակչության պաշտպանության գործընթացի համապարփակ ապահովմանը.*

***20) բնակչության կենսաապահովում՝*** *բնակչության կենսագործունեության համար անհրաժեշտ ֆիզիոլոգիական, նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարմանն ուղղված նվազագույն պայմանների ստեղծում և պահպանում.*

**21)** ***դիմակայունություն՝*** աղետների ռիսկի ազդեցությանը, հարմարվելու այդ ազդեցություններից առաջացած պայմաններին և արագ վերականգնվելու պետության, համայնքի և հասարակության *կարողությունն է*

**22) լիազոր մարմին**՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ինչպես նաև աղետների ռիսկերի, հետևանքների նվազեցման և վերացման ապահովման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին:

ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին:

**23) խոցելիություն**՝ վտանգի, վտանգավոր երևույթի ազդեցությանը ենթակա տարածքում առկա բնակչության և նրանց կենսագործունեությունն ապահովող տարրերի (շենք, շինություն, ջրային և հողային ռեսուրսներ, ենթակառուցվածքներ և այլն) վնասվելու հակվածության աստիճանը.

**24) կարողություն**՝ պետության, համայնքի, կազմակերպության, անհատի մոտ առկա բոլոր հնարավորությունների, հատկանիշների և ռեսուրսների (նյութական, ֆիզիկական, հոգևոր, մտավոր) միասնություն, որը կարող է օգտագործվել սահմանված նպատակներին հասնելու համար.

**25) կորուստ՝** արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած տնտեսական հոսքերի բացասական փոփոխությունն է՝ ներառյալ բաց թողնված օգուտը, որը կարող էր ստացվել մինչև տվյալ իրավիճակի առաջացումը:

**26) կարևորագույն նշանակության օբյեկտներ՝** բնակչության կենսագործունեությունն ապահովող պետական և համայնքային նշանակության օբյեկտներ.

***27) հետաղետային վերականգնում՝*** *աղետից տուժած բնակչության բնականոն կենսագործունեության պայմանների, տարածքների, օբյեկտների վերականգմանը, վերակառուցմանն ու բարելավմանն ուղղված հետաղետային միջոցառումներ՝ ներառյալ աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված գործընթացներ.*

***28)* որոնողափրկարարական աշխատանքներ՝** միջոցառումների համալիր՝ ուղղված մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների հայտնաբերմանը, փրկմանը և համապատասխան օգնության ցուցաբերմանը**.**

***29) պատսպարում՝*** *զենքի տեսակների կիրառման կամ կիրառման սպառնալիքի դեպքում, արտակարգ իրավիճակներում մարդկանց կյանքն ու առողջությունն ապահովելու նպատակով՝ պաշտպանական կառույցներում բնակչության ժամանակավոր տեղավորումն ու կենսապահովումը.*

***30) վաղ վերականգնում՝*** *վերականգնողական առաջնահերթ միջոցառումների համալիր ուղղված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման փուլում առկա ռեսուրսների ու մարդասիրական աջակցության արդյունավետ օգտագործմանը՝ կայուն վերականգնում և դիմակայուն զարգացում ապահովելու համար:*

**31) *վթար՝*** *վտանգավոր տեխնածին պատահար, որը որոշակի տարածքում հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի,* նրանց առողջության վատթարացման, ինչպես նաև նյութական զգալի կորուստների, *առաջացնում է կամ կարող է առաջացնել շենքերի, շինությունների, սարքավորումների ու տրանսպորտային միջոցների ավերումներ, արտադրական կամ տրանսպորտային գործընթացների խանգարումներ, և վնաս հասցնել շրջակա միջավայրին.*

***32)* վտանգ՝** ցանկացած երևույթ, գործընթաց, գործունեություն, նյութ, իրադարձություն, որը կարող է հանգեցնել կյանքի, կենսաապահովման միջոցների, ունեցվածքի, ծառայությունների կորուստների, առողջական վիճակի, սոցիալական և տնտեսական գործունեության խաթարումների, բնապահպանական և այլ վնասների.

***33) վտանգի կանխում՝*** *վտանգ առաջացնող գործոնների բացահայտում, գնահատում և վերացում.*

***34) վտանգի կանխարգելում՝*** *վտանգի հնարավոր բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումներ.*

***35)* վտանգավոր օբյեկտ**՝ օբյեկտ, որտեղ օգտագործում, արտադրում, վերամշակում, պահում կամ փոխադրում են ճառագայթաակտիվ, հրդեհապայթյունավտանգ, քիմիապես և կենսաբանորեն վտանգավոր նյութեր, ինչպես նաև հիդրոտեխնիկական կառույցներ, որոնց վթարը ուղեկցվելու է զգալի վնասով և մարդկային կորստով.

***36) վնաս՝*** *արտակարգ իրավիճակի հետևանքով գույքի, ֆիզիկական ակտիվների և ենթակառուցվածքների ամբողջական կամ մասնակի ոչնչացումն է, որն արտահայտվում է ֆիզիկական չափման միավորներով և վերականգնման արժեքով.*

***37) տարատեղում՝*** *վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, նյութական և մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխում.*

***38) տարահանում՝*** *վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, նյութական և մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխում, տեղաբաշխում ու կենսապահովում:*

**39) փրկարարական աշխատանքներ՝** մարդկանց, նյութական և մշակութային արժեքների փրկության նպատակով միջոցառումների համալիր,

**40) փրկարարական աշխատանքների համակողմանի ապահովում՝** միջոցառումների համալիր՝ ուղղված որոնողափրկարարական աշխատանքների անխափան ընթացքը ապահովելու համար (համակողմանի ապահովումը ներառում է՝ հետախուզություն/մոնիթորինգ, ՔԿՃՄ, հիդրոօդերևութաբանական, ինժեներական, հակահրդեհային, երթևեկության, տեխնիկական, նյութատեխնիկական/թիկունքային, բժշկական, տրանսպորտային, նյութական/ֆինանսական **,** սեյսմիկ, հասարակական կարգի ապահովումներ և պարեկային ծառայության կազմակերպում):

## ԳԼՈՒԽ 2

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

### Հոդված 3. Բնակչության պաշտպանության սկզբունքները

1. Բնակչության պաշտպանության սկզբունքներն են.

- Բնակչության կյանքի և առողջության անվտանգության ապահովման գերակայությունը.
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերի հրապարակայնությունը.
- բնակչության առավել խոցելի խմբերի պաշտպանության ապահովման առաջնահերթությունը.
- պետության, համայնքի, կազմակերպության բնականոն գործունեության ապահովման և զարգացման գործընթացների իրականացումը աղետների ռիսկի գիտակցմամբ, որն ուղղորդվում է աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառմամբ և նոր

ռիսկերի բացառմամբ.

- աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակի հետևանքներից բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպմանը համալիր մոտեցման ցուցաբերումը՝ ապահովելով բոլոր մակարդակներում բնականոն գործունեություն.
- տեխնածին վթարների առաջացումը և տեխնածին աղետների ռիսկը բացառելու նպատակով միայն ստուգված եւ տեխնիկական անվտանգություն ապահովող փորձարկված միջոցառումների կիրառումը.
- տեղեկատվական անվտանգության ապահովումը:

**Հոդված 4. Բնակչության պաշտպանության  նպատակները**

1. Բնակչության պաշտպանության նպատակներն են.

- աղետների ռիկսկի նվազեցումը, արձագանքումն ու վաղ վերականգնումը և հետաղետային վերականգնումը.

**Գ Լ ՈՒ Խ 3**

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

**Հոդված 5.   Բնակչության պաշտպանության միջոցառումներն են.**

1. Աղետների ռիսկի նվազեցումը,
2. արձագանքումը և վաղ վերականգնումը,
3. հետաղետային վերականգնումը:

**Հոդված 6. Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումները**

- Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներն են՝

- աղետների ռիսկի բաղադրիչների (վտանգի, խոցելիության և կարողությունների)  բացահայտումն ու գնահատումը.
- աղետների ռիսկի տեղեկատվական միասնական համակարգի ստեղծումը և կառավարումը.
- զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառումը և այդ ծրագրերից բխող նոր ռիսկերի բացառումը.
- աղետների ռիսկի կառավարման պլանների մշակումն ու կիրարկումը.
- ազդարարման միասնական համակարգի ստեղծումը և հասանելիության ապահովումը բոլոր մակարդակներում՝առանձնահատուկ ուշադրություն դարձնելով բնակչության խոցելի խմբերի կարիքներին.
- բնակավայրերի, տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում վտանգավոր արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխումը՝ բնակչության պաշտպանության տեսանկյունից.
- շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների անվտանգ և հուսալի շինարարության ապահովումը.
- վտանգավոր և մարդկային կուտակումներով օբյեկտների գործունեության   անվտանգության ապահովումը.
- բնական, տեխնոլոգիական, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական  վտանգների մշտադիտարկման և հսկողության կազմակերպումը.
- բնակչության բոլոր շերտերի ուսուցումը և իրազեկումը, մասնագիտացված կրթական ծրագրերի իրականացումը՝ ուշադրություն դարձնելով առավել խոցելի խմբերի կարիքներին.
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների աշխատողների ղեկավար կազմի և մասնագետների ուսուցման կազմակերպումը.
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ծառայությունների և ենթակառուցվածքների գործունեության կայունության և աշխատանքների անխափան շարունակականության ապահովումը.
- աղետների ռիսկի նվազեցման, դիմակայունության և անվտանգության մշակույթի ձևավորման ուղղությամբ բնակչության բոլոր շերտերի համար ուսուցման, կրթական ծրագրերի և իրազեկման ապահովումը:

2. Աղետների ռիսկի նվազեցման և բնակչության պաշտպանության միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
3. Բնակչության պաշտպանությունը կազմակերպվում ու իրականացվում են պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից՝

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**Հոդված 7. Արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման միջոցառումները**

1. Արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման միջոցառումներն են.

- Տարբեր մակարդակներում արձագանքման պլանների գործարկումը.
- վտանգի կամ աղետի առաջացման մասին պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ազդարարումը.
- աղետի գոտում բնակչության տարհանման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցների ապահովումն ու իրականացումը.
- աղետի գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարումը.
- բնակչության իրազեկումը, տեղեկատվության հասանելիության և հետադարձ կապի միջոցների ապահովումը.
- աղետի գոտում շրջակա միջավայրի, խմելու ջրի, սննդամթերքի վիճակի և վարակվածության դիտարկումը, զննումն ու հսկողությունը.
- ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումների իրականացումը.
- աղետի գոտում հասարակական կարգի, բնակչության կենսագործունեությունն ապահովող և կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացումը.
- բնակչության բժշկական սպասարկման իրականացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով վերարտադրողական առողջության հետ կապված խնդիրներին.
- աղետի գոտում իրականացվող աշխատանքներում անհատների ներգրավումը՝ նրանց համաձայնությամբ կամ կամավոր հիմունքներով, ըստ մասնագիտական և անհատական ունակությունների.
- աղետի գոտում բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ ֆինանսական.
- աղետի գոտում քաղաքացիների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների ներմուծման և արտահանման կանոնակարգումը.
- կարիքների արագ գնահատումը և աղետի գոտում վաղ վերականգնման միջոցառումների ապահովումը.
- միջազգային մարդասիրական օգնության հայտի ներկայացումը, միջազգային արագ արձագանքման թիմերի, հումանիտար բեռների և

ուղեկցող անձնակազմի ներգրավման կազմակերպումը.

- կորած անձանց՝ առաջնահերթ բնակչության առավել խոցելի խմբերի որոնումը, հայտնաբերումը և ընտանիքի հետ միավորումը.
- պետական սեփականություն հանդիսացող գույքի, նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային հավաքումը և օգտագործումը.
- անհրաժեշտության դեպքում աղետի գոտում ոչ պետական սեփականություն համարվող գույքի ժամանակավոր տիրապետումը և/կամ օգտագործումը՝ սեփականատիրոջ համաձայնությամբ՝ օրենքով սահմանված կարգով.
- կապի հանրապետական, տեղական և այլ ցանցերի առաջնահերթ օգտագործումը.
- աղետի գոտում կարանտինային և այլ հակահամաճարակային միջոցառումների իրականացումը.
- գյուղատնտեսական մշակաբույսերի և կենդանիների պաշտպանությունը:

1. Սույն հոդվածով 1-ին մասով նախատեսված միջոցառումներն իրականացնելու նպատակով, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունն աղետի գոտում կարող է ստեղծել արտակարգ իրավիճակների հանձնաժողովներ, որոնց ձևավորման, գործնեության և դադարեցման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

**Հոդված 8. Հետաղետային վերականգնման միջոցառումները**

1. Հետաղետային վերականգնման միջոցառումներն են՝

- աղետի գոտում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ծառայությունների և ենթակառուցվածքների գործունեության վերականգնումը.
- արտակարգ իրավիճակի հետևանքով պատճառված վնասի և կորուստի գնահատումն ու հաշվառումը, հետաղետային վերականգման և վերակառուցման կարիքների գնահատումը.
- հետաղետային վերականգնման քաղաքականության և ռազմավարության ձևավորումը, դրանց իրականացմանն ուղղված միջոցառումների միասնական ծրագրի մշակումն ու իրականացումը, հաշվի առնելով առավել խոցելի խմբերի կարիքները, ինչպես նաև այդ գործընթացում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառումը և նոր ռիսկերի բացառումը.
- հետաղետային աշխատանքների իրականացման կազմակերպումն ու ղեկավարումը.

- աղետի գոտում տնտեսական գործունեության և բնակչության բնականոն կենսագործունեության վերականգնումը.
- հետաղետային վերականգնման միջոցառումների իրականացմանն ուղղված ռեսուրսների ներգրավումն ու կառավարումը.
- հետաղետային վերականգնման և վերակառուցման գործընթացներում շինարարական աղբի, արդյունաբերական և քիմիական թափոնների համար առավելագույն անվտանգ տեղամասերի հստակեցումը, թափոնների մեկուսացումն ու վերացումը` բնապահպանական և բնակչության անվտանգության ապահովման միջազգային չափանիշներին համապատասխան.
- աղետի գոտում պատմամշակութային կոթողների, հուշարձանների և մշակութային արժեքների հետաղետային վերականգնումը.
- ազգային և համայնքային մակարդակներում վերականգնողական աշխատանքների իրականացնելու կարողությունների հզորացումը:

## Գ Լ ՈՒ Խ 4

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

### Հոդված 9. Բնակչության պաշտպանության համակարգը և ղեկավարումը

1. Բնակչության պաշտպանության համակարգում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության կառավարությունը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և կազմակերպությունները:

2. Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության ամբողջ ընթացքի կառավարման կազմակերպման, մարդասիրական օգնության ընդունման և համակարգման գործընթացների և բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման համար նախապես ստեղծվում են` արտակարգ իրավիճակների հանձնաժողովներ, աղետի հետևանքների վերացման կառավարման ու ազգային աջակցման մարմիններ` հանրապետական, մարզային և համայնքային մակարդակներում, որոնց կառուցվածքը, գործառույթները և անհրաժեշտ

գործողությունների ընթացակարգերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

3. *Բնակչության պաշտպանության համակողմանի ապահովումը ներառում է՝*

*1)* աղետների ռիսկի տեղեկատվական միասնական համակարգի ստեղծումը և կառավարումը.

2) զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառումը.

3) վտանգի առաջացման մասին պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ազդարարումը.

4) վտանգի առաջացման մասին պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ազդարարումը.

5) վտանգավոր և բարձր ռիսկայնության օբյեկտների գործունեության անվտանգության ապահովումը.

6) աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ բնակչության իրազեկուման, ուսուցման և վարժանքների իրականացումը.

7) աղետի գոտում բնակչության տարհանման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը.

8) բնակչության իրազեկման, տեղեկատվության հասանելիության և հետադարձ կապի ապահովումը.

9) աղետի գոտու շրջակա միջավայրի, խմելու ջրի, սննդամթերքի վիճակի և վարակվածության դիտարկման, զննման ու հսկողության սահմանումը.

10) ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումները.

11) բնակչության կենսագործունեությունն ապահովող և կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացումը.

12) աղետի գոտում բնակչության բժշկական սպասարկման իրականացումը.

13) աղետի գոտում իրականացվող աշխատանքներում  կամավորների և կամավորական խմբերի ներգրավումը.

14) աղետի գոտում բնակչության կենսաապահովման միջոցառումների և դրամական աջակցության իրականացումը.

15) աղետի գոտում քաղաքացիների, տրանսպորտային միջոցների

տեղաշարժման, բեռների ներմուծման և արտահանման կանոնակարգումը.

16) միջազգային արագ արձագանքման թիմերի, հումանիտար բեռների և ուղեկցող անձնակազմի ներգրավում.

17) աղետի գոտում ոչ պետական սեփականություն համարվող գույքի ժամանակավոր տիրապետում և օգտագործում` փոխհատուցմամբ.

**Հոդված 10. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ**

1.Հայաստանի Հանրապետության կառավարությունը աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ`

- հաստատում է պետական քաղաքականության հիմնական ուղղությունները` բնակչության պաշտպանության բնագավառում.
- հաստատում է աղետների ռիսկի գնահատման կարգը, սահմանում իրականացման համար անհրաժեշտ միջոցները.
- սահմանում է արտակարգ իրավիճակների առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների ու գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննություն իրականացնելու կարգը.
- հաստատում է աղետների ռիսկի կառավարման պլանների ձևերն ու կառուցվածքը.
- հաստատում է կազմակերպությունների ցանկը, որոնք պետք է մշակեն, հաստատեն և կիրարկեն աղետների ռիսկի կառավարման պլանները.
- հաստատում է ազդարարման միասնական համակարգի ստեղծման և անխափան շահագործման ապահովման կարգը, սահմանում է իրականացման համար անհրաժեշտ միջոցները.
- հաստատում է կարիքների գնահատման և աղետի գոտում վաղ վերականգնման միջոցառումների ապահովման կարգը.
- հաստատում է կապի հանրապետական, գերատեսչական, տեղական և այլ ցանցերի առաջնահերթ օգտագործման կարգը.
- հաստատում է  վնասի  և կորուստների գնահատման, հետաղետային վերականգնման և վերակառուցման կարիքների գնահատման կարգը, ինչպես նաև այդ միջոցառումների իրականացման հանձնաժողովների ձևավորման և աշխատանքի կարգը.
- հաստատում է հետաղետային վերականգնմանն ուղղված քաղաքականությունն ու ռազմավարությունը, դրանց իրականացմանը միտված միջոցառումների միասնական ծրագրին ներկայացվող պահանջները, չափորոշիչները և այդ աշխատանքների իրականացման կարգը.
- կազմակերպում է հետաղետային վերականգնման և վերակառուցման գործընթացներում շինարարական աղբի, արդյունաբերական և

քիմիական թափոնների համար առավելագույն անվտանգ տեղամասերի հատկացման, թափոնների մեկուսացման ու վերացման կարգի մշակման աշխատանքները և հաստատում է կարգը.

- հաստատում է արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կարգը:
- հաստատում է աղետին արձագանքող սոցիալական պաշտպանության ապահովման կարգը.
- հաստատում է *բնակչության պաշտպանության համակողմանի ապահովման կարգը.*
- Հասատում է Արտակարգ իրավիճակների հանձնաժողովների, աղետի հետևանքների վերացման կառավարման ու ազգային աջակցման մարմինների կառուցվածքը, գործառույթներն ու անհրաժեշտ գործողությունների ընթացակարգերը:

**Հոդված 11.Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ**

1.Հայաստանի Հանրապետության կառավարությունը արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ`

- հայտարարում է աղետի գոտի և սահմանում դրա տարածքը.
- հաստատում է աղետի գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման կարգը.
- ապահովում է բնակչության իրազեկումը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում.
- ապահովում է աղետի գոտու շրջակա միջավայրի, խմելու ջրի, սննդամթերքի վիճակի և վարակվածության դիտարկման, զննման ու հսկողության սահմանման իրականացումը.
- ապահովում է ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումների իրականացումը.
- ներկայացնում է միջազգային մարդասիրական օգնության հայտը և վերահսկում իրականացումը.
- ապահովում է պետական կառավարման համակարգի և տարածքային կառավարման մարմինների կայունության և աշխատանքների շարունակականության ապահովման միջոցառումների իրականացումը:

**Հոդված 12. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը հետաղետային վերականգնման ուղղությամբ**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը հետաղետային վերականգնման ուղղությամբ՝

- մշակում և հաստատում է աղետի գոտու վերականգնմանն ուղղված քաղաքականությունը, ռազմավարությունը և դրանցից բխող գործողությունների ծրագիրը, ապահովում դրանց իրականացումը և մշտադիտարկումը.
- ապահովում է վնասի և կորուստների, հետաղետային վերականգման և վերակառուցման կարիքների գնահատումը՝ ներառյալ այդ գործընթացների համար ձևավորված հանձնաժողովների աշխատանքը.
- կազմակերպում է հետաղետային վերականգնման միջոցառումների իրականացմանն ուղղված ռեսուրսների ներգրավման և կառավարման ծրագրի մշակումը և հաստատում մշակված ծրագիրը.
- կազմակերպում է հետաղետային վերականգնման և վերակառուցման գործընթացներում շինարարական աղբի, արդյունաբերական և քիմիական թափոնների համար առավելագույն անվտանգ տեղամասերի հատկացման, թափոնների մեկուսացման ու վերացման աշխատանքները.
- կազմակերպում է պատմամշակութային կոթողների, հուշարձանների և մշակութային արժեքների հետաղետային վերականգնման ծրագրի մշակումը և հաստատում է այն.
- կազմակերպում է արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման աշխատանքները.
- կազմակերպում է հետաղետային վերականգնման համար միջազգային մարդասիրական օգնության հայցման և ընդունման գործըթացները.
- իրականացնում է բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 13. ՀՀ Վարչապետի իրավասությունը**

1. ՀՀ Վարչապետը՝

- իրականացնում է բնակչության պաշտպանության ընդհանուր ղեկավարումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում.
- արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ առաջացման դեպքում, Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարում է արտակարգ իրավիճակ.

- անհրաժեշտության դեպքերում լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությամբ կայացնում է որոշում ՀՀ զինված ուժերի, այլ զորքերի և զինվորական ստորաբաժանումների՝ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին ներգրավման վերաբերյալ:

**Հոդված 14**. **Լիազոր մարմնի իրավասությունը աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ**

1. Լիազոր մարմինը աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ՝

- մշակում է աղետների ռիսկի գնահատման կարգը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.
- կազմակերպում է աղետների ռիսկի գնահատման իրականացման, ռեսուրսների ապահովման, մշտադիտարկման և վերահսկման գործընթացը, ինչպես նաև ապահովում է տեղեկատվության տրամադրումը.
- կազմակերպում է արտակարգ իրավիճակների առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննությունը.
- կազմակերպում է փրկարար ծառայողների վերպատրաստման (որակավորման), ատեստավորման աշխատանքները և բնակչության ուսուցումը՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.
- մշակում և կառավարության  հաստատման է ներկայացնում աղետների ռիսկի տեղեկատվական միասնական համակարգի կարգը, կազմակերպում է իրականացման գործընթացը, ապահովում վերահսկումը, հաշվետվողականությունը և համակարգումը.
- մշակում է զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառման կարգը և ապահովում մշտադիտարկումը.
- մշակում և հաստատում է աղետների ռիսկի կառավարման օրինակելի պլանի ձևը, վերահսկում նրանց կիրարկումը, ապահովում մշտադիտարկում և տրամադրում է մասնագիտացված աջակցություն.
- մշակում է ազդարարման միասնական համակարգի ստեղծման կարգը, և ներկայացնում կառավարության հաստատմանը, համակարգում և վերահսկում է իրականացումը, ապահովում համակարգի անխափան աշխատանքի մշտադիտարկում և տրամադրում մասնագիտական աջակցություն.
- իրականացնում է բնակավայրերի, տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում վտանգավոր արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխման վերահսկումը ըստ սահմանված նորմերի.
- իրականացում է շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների անվտանգ և հուսալի շինարարության ապահովման վերահսկումը ըստ

սահմանված նորմերի.

- իր լիազորությունների շրջանակում իրականացնում է ուսումնասիրություն պետական, տեղական ինքնակառավարման մարմիններում և կազմակերպություններում, և ներկայացնում է առաջարկություններ բնակչության պաշտպանության ոլորտում առկա խնդիրների, թերությունների վերացման, աղետների ռիսկի նվազեցմանն ուղված միջոցառումների իրականացման և արձագանքման պատրաստվածության մասին՝ Կառավարության կողմից սահմանված կարգով.
- մշակում է առավել վտանգավոր օբյեկտների և մարդկային կուտակումներով գործունեության անվտանգության ապահովման կարգը և նորմերը, իրականացնում է դրանց վերահսկումը.
- իր լիազորությունների շրջանակում ապահովում է բնական, տեխնոլոգիական, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական վտանգների մշտադիտարկումն ու հսկողության կազմակերպումը.
- մշակում է աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ բնակչության կրթության, իրազեկման, ուսուցման և վարժանքների իրականացման կարգը, ներկայացնում կառավարության հաստատմանը, համակարգում և վերահսկում է իրականացումը.
- մշակում և կառավարության հաստատմանն է ներկայացնում արտակարգ իրավիճակներում տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ու դրանց օգտագործման կարգը,
- մշակում և կառավարության հաստատմանն է ներկայացնում արտակարգ իրավիճակների կանխմանը, հնարավոր հետևանքների նվազեցմանը, աղետների ռիսկի կառավարմանն ու բնակչության պաշտպանությանն ուղղված պլաններ, պլանների օրինակելի ձևեր.
- մշակում է արձագանքման պլանների գործարկման կարգը և ներկայացնում կառավարության հաստատմանը, աջակցում է պլանների մշակմանը, համակարգում և վերահսկում է դրանց իրականացումը.
- մշակում է վտանգի կամ աղետի առաջացման մասին պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ազդարարման կարգը և ներկայացնում կառավարության հաստատմանը.
- ապահովում է ազդարարման միասնական համակարգի ձևավորումը, վերահսկում է համակարգի անխափան աշխատանքը և ազդարարման ապահովումը բոլոր մակարդակներում.
- մշակում է աղետի գոտում բնակչության տարհանման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցներով ապահովման կարգը և ներկայացնում կառավարության հաստատմանը.
- մշակում է աղետի գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման կարգը:
- համակարգում է աղետի գոտում շրջակա միջավայրի, խմելու ջրի, սննդամթերքի վիճակի և վարակվածության դիտարկման, զննման ու հսկողության սահմանման կարգի մշակումը.
- համակարգում է ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումների իրականացման կարգի մշակումը.
- համակարգում աղետի գոտում հասարակական կարգի, բնակչության կենսագործունեությունն ապահովող և կարևորագույն օբյեկտների

պահպանության ուժեղացման կարգի մշակումը.
- մշակում է աղետի գոտում իրականացվող աշխատանքներում կամավորների և կամավորական խմբերի ներգրավման կարգը.
- մշակում է աղետի գոտում բնակչության կենսաապահովման միջոցառումների և դրամական աջակցության իրականացման կարգը.
- կազմակերպում է աղետի գոտում քաղաքացիների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների ներմուծման և արտահանման կանոնակարգման կարգի մշակումը և ներկայացնում է կառավարության հաստատմանը.
- մշակում է կարիքների գնահատման և աղետի գոտում վաղ վերականգնման միջոցառումների ապահովման կարգը.
- մշակում է միջազգային արագ արձագանքման թիմերի, հումանիտար բեռների և ուղեկցող անձնակազմի ներգրավման կարգը.
- մշակում է աղետի գոտում ոչ պետական սեփականություն համարվող գույքի ժամանակավոր տիրապետման և/կամ օգտագործման կարգը.
- մշակում է կապի հանրապետական, գերատեսչական, տեղական և այլ ցանցերի առաջնահերթ օգտագործման կարգը և համակարգում իրականացումը.
- մշակում և կառավարության հաստատմանն է ներկայացնում կորուստների և վնասի, հետաղետային վերականգման և վերակառուցման կարիքների գնահատման կարգն ու մեթոդաբանությունը.
- կազմակերպում է հետաղետային վերականգնմանն ուղղված միջոցառումների միասնական ծրագրին ներկայացվող պահանջների և չափորոշիչների մշակումը.
- մշակում և կառավարության հաստատմանն է ներկայացնում արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի, աղետի հետևանքների վերացման կառավարման ու ազգային աջակցման մարմինների ձևավորման և գործելու ընթացակարգերը, ինչպես նաև կազմակերպում է դրանց աշխատանքները.
- մշակում և կառավարության հաստատմանն է ներկայացնում պետական մարմինների կայունության և աշխատանքների շարունակականության ապահովման միջոցառումների ընթացակարգերը:

**Հոդված 15**. **Լիազոր մարմինը իրավասությունը արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ**

1. Լիազոր մարմինը իրավասությունը արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ՝

- համակարգում է աղետի գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները.
- կազմակերպում և համակարգում է բնակչության տարհանման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցներով

ապահովման գործողությունների իրագործմանը, իրականացնում է մշտադիտարկում.

- համակարգում է բնակչության իրազեկման, տեղեկատվության հասանելիության և հետադարձ կապի ապահովման իրականացումը բոլոր մակարդակում.
- ապահովում է տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների ու ֆոնդերի նպատակային օգտագործումը.
- համակարգում է աղետի գոտում շրջակա միջավայրի, խմելու ջրի, սննդամթերքի վիճակի և վարակվածության դիտարկման, զննման ու հսկողության իրականացումը բոլոր մակարդակում.
- համակարգում է ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումներովապահովումը բոլոր մակարդակներում.
- համակարգում աղետի գոտում բնակչության բժշկական սպասարկման իրականացման պլանավորումը և իրականացումը.
- համակարգում է կարիքների գնահատման և աղետի գոտում վաղ վերականգնման միջոցառումների պլանավորման և իրականացման գործընթացները.
- կազմակերպում է միջազգային մարդասիրական օգնության հայտի մշակումը և համակարգում է միջազգային արագ արձագանքման թիմերի, հումանիտար բեռների և ուղեկցող անձնակազմի ներգրավման պլանավորումն ու իրականացումը.
- աջակցում է կորած անձանց առաջնահերթ բնակչության առավել խոցելի խմբերի որոնման, հայտնաբերման և ընտանիքի հետ միավորման գործընթացի իրականացմանը.
- համակարգում է պետական սեփականություն հանդիսացող գույքի, նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային հավաքման և օգտագործման գործընթացը.
- համակարգում է աղետի գոտում ոչ պետական սեփականություն համարվող գույքի ժամանակավոր տիրապետման և օգտագործման իրականացումը.
- համակարգում է կապի հանրապետական, գերատեսչական, տեղական և այլ ցանցերի առաջնահերթ օգտագործման իրականացումը.
- աղետի գոտում սահմանված կարգով համակարգում է աղետի գոտում կարանտինային, սանիտարահակահամաճարակային, անասնահամաճարակային և մշակաբույսերի զանգվածային հիվանդությունների վերացման միջոցառումների իրականացումը.
- աջակցում է աղետի գոտու վերականգնմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակմանը և ներգրավվում դրանց իրականացմանը՝ համաձայն հաստատված պլանի.
- առաջարկություններ է ներկայացնում հանրապետական արձագանքման պլանների մասամբ կամ ամբողջովին գործի մեջ դնելու վերաբերյալ, համակարգում է այդ պլաններով սահմանված միջոցառումների կատարումը:

**Հոդված 16. Լիազոր մարմնի իրավասությունը հետաղետային վերականգնման ուղղությամբ**

1. 1. Լիազոր մարմինը հետաղետային վերականգնման ուղղությամբ՝

- համակարգում է վնասի և կորուստների, հետաղետային վերականգման և վերակառուցման կարիքների գնահատման գործընթացը.
- կազմակերպում է հետաղետային վերականգնմանն ուղղված միջոցառումների միասնական ծրագրի մշակումը և աջակցում իրականացմանը.
- կազմակերպում է հետաղետային վերականգնման կարողությունների զարգացումը ազգային, մարզային և համայնքնային մակարդակներում
- իրականացնում է բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 17.Պետական կառավարման համակարգի մարմինների իրավասությունը աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ**

1.Պետական կառավարման համակարգի մարմինները աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ՝

- իրականացնում են իրենց գործունենության ոլորտի աղետների ռիսկի գնահատման գործընթացը.
- բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման ոլորտներում համակարգում են իրենց ենթակա կազմակերպությունների աշխատանքները՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից
- իրականացնում են աղետների ռիսկի տեղեկատվության հավաքագրումն ու տրամադրումը.
- ապահովում են իրենց ոլորտային զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառումը և ապահովում այդ միջոցառումների իրականացումն ու վերահսկումը.
- մշակում և հաստատում են իրենց կառույցի աղետների ռիսկի կառավարման պլանները, ներկայացնում համաձայնեցման լիազոր մարմնին, ապահովում կիրարկումն ու վերահսկումը.
- իրենց համակարգում ստեղծում են ազդարարման համակարգ՝ սահմանված կարգով, ապահովում անխափան աշխատանքը և իր աշխատակիցների ազդարարումը.
- ապահովում են բնակավայրերի, տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում

վտանգավոր արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխման նորմերի իրականացումը.

- ապահովում են շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների անվտանգ և հուսալի շինարարության նորմերի իրականացումը.
- ապահովում են վտանգավոր օբյեկտների և մարդկային կուտակումներով գործունեության անվտանգության ապահովման նորմերի իրականացումը.
- ապահովում է բնական, տեխնոլոգիական, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական վտանգների մշտադիտարկումն ու հսկողության կազմակերպումը.
- ապահովում է իր աշխատողների ուսուցման և ուսումնական վարժանքների իրականացման գործընթացը.
- , ապահովում են արձագանքման պլանների մշակումը և գործարկումը.
- կազմակերպում են իրենց համակարգի աշխատողների պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.
- մշակում են աշխատողների տարատեղման, տարհանման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցներով ապահովման գործողությունների պլանը, համաձայնեցում լիազոր մարմնի հետ, հաստատում և ապահովում իրագործումը.
- մշակում են աղետի գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման կամ աջակցման պլանը, ապահովում դրա կատարումը։

**Հոդված 18. Պետական կառավարման համակարգի մարմինների իրավասությունը արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ.**

1. Պետական կառավարման համակարգի մարմինների արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ՝

- ապահովում է իր համակարգի աշխատակիցների իրազեկումը.
- համաձայն հաստատված պլանների կազմակերպում են ենթակա ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունն արտակարգ իրավիճակներում.
- ապահովում ենբնակչության պաշտպանությունը և այդ նպատակով ստեղծում են անհրաժեշտ մասնագիտացված խմբեր.
- ապահովում է իր համակարգի աշխատողների տարատեղման, տարհանման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցներով ապահովման գործողությունների պլանի իրագործումը.
- ապահովում են աղետի գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը.
- ապահովում են աղետի գոտու շրջակա միջավայրի, խմելու ջրի, սննդամթերքի վիճակի և վարակվածության դիտարկման, զննման ու հսկողության իրականացումը.
- ապահովում են ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական

նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումների պլանավորումն ու իրականացումը.

- ապահովում են աղետի գոտում հասարակական կարգի, բնակչության կենսագործունեությունն ապահովող և կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացման գործընթացների պլանավորումն ու իրականացումը.
- պլանավորում և ապահովում են աղետի գոտում բնակչության բժշկական սպասարկման գործընթացը.
- ապահովում են աղետի գոտում բնակչության կենսաապահովման միջոցառումների և դրամական աջակցության պլանավորումն ու իրականացումը.
- ապահովում է աղետի գոտում քաղաքացիների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների ներմուծման և արտահանման կանոնակարգման պլանավորումն ու իրականացումը.
- աջակցում է կարիքների գնահատման և աղետի գոտում վաղ վերականգնման միջոցառումների պլանավորման և իրականացման գործընթացներին.
- աջակցում է միջազգային մարդասիրական օգնության հայտի մշակմանը, միջազգային արագ արձագանքման թիմերի, հումանիտար բեռների և ուղեկցող անձնակազմի ներգրավման պլանավորումն ու իրականացումը.
- ապահովում են մասնակցություն արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի, աղետի հետևանքների վերացման կառավարման ու ազգային աջակցման մարմինների աշխատանքներին.
- իրենց լիազորության սահմաններում իրականացնում է աղետի գոտում կորած անձանց որոնման, հայտնաբերման՝ առաջնահերթ բնակչության առավել խոցելի խմբերի, և ընտանիքի հետ միավորման աշխատանքները.
- իրենց լիազորության սահմաններում աջակցում են պետական սեփականություն հանդիսացող գույքի, նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային հավաքման և օգտագործման գործընթացին.
- սահմանված կարգով տիրապետում և/կամ օգտագործում են աղետի գոտում ոչ պետական սեփականություն համարվող գույքը.
- իրենց իրավասության սահմաններում օժանդակում և իրկանացնում են կապի հանրապետական, գերատեսչական, տեղական և այլ ցանցերի առաջնահերթ օգտագործումը.
- սահամանված կարգով իրականացնում են աղետի գոտում կարանտինային, սանիտարահակահամաճարակային, անասնահամաճարակային և մշակաբույսերի զանգվածային հիվանդությունների վերացման միջոցառումները.
- իրականացնում ենբնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 19. Պետական կառավարման համակարգի մարմինների իրավասությունը հետաղետային վերականգնման ուղղությամբ.**

1.Պետական կառավարման համակարգի մարմինների իրավասությունը հետաղետային վերականգնման ուղղությամբ.

- շրջանակներում աջակցում են աղետի գոտու վերականգնմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակմանը և ներգրավվում դրանց իրականացմանը՝ համաձայն հաստատված պլանի.
- ապահովում են կորուստների և վնասի, հետաղետային վերականգման և վերակառուցման կարիքների գնահատման գործընթացում համապատասխան մասնագետների մասնակցությունը և ներկայացնում են ոլորտին վերաբերող մասնագիտական եզրակացություն.
- իրենց իրավասության սահմաններում օժանդակում են հետաղետային վերականգնմանն ուղղված միջոցառումների միասնական ծրագրի մշակման և իրականացման աշխատանքներին.
- իրենց իրավասության սահմաններում իրականացնում են տնտեսական գործունեության, բնակարանային ֆոնդի և բնականոն կենսագործունեության վերականգնման աշխատանքները.
- իրենց իրավասության սահմաններում իրականացնում են հետաղետային վերականգնման միջոցառումներին ուղղված ռեսուրսների ներգրավում և կառավարում.
- իրենց իրավասության սահմաններում աջակցում են հետաղետային վերականգնման և վերակառուցման գործընթացներում շինարարական աղբի, արդյունաբերական և քիմիական թափոնների համար առավելագույն անվտանգ տեղամասերի հատկացման, թափոնների մեկուսացման ու վերացման աշխատանքներին.
- իրենց իրավասության սահմաններում աջակցում են պատմամշակութային կոթողների, հուշարձանների և մշակութային արժեքների հետաղետային վերականգնման ծրագրի մշակմանը և իրականացմանը.
- իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 20. Տարածքային կառավարման մարմինների (մարզպետներ) իրավասությունը աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ**

1.Տարածքային կառավարման մարմինները աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ՝

- մարզի տարածքում համակարգում և իրականացնում է աղետների ռիսկի գնահատման գործընթացը.
- իրականացնում է աղետների ռիսկի տեղեկատվության հավաքագրումն ու տրամադրումը.
- մարզային մակարդակում ապահովում է մարզային զարգացման

ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառումը, և ապահովում այդ միջոցառումների իրականացումն ու վերահսկումը.

- մշակում և հաստատում է աղետների ռիսկի կառավարման մարզային պլանը, ներկայացնում համաձայնեցման լիազոր մարմնին, և ապահովում դրա կիրարկումն ու վերահսկումը.
- սահմանված կարգով աջակցում են ազդարարման միասնական համակարգի ստեղծման գործընթացին և ապահովում համակարգի անխափան աշխատանքի մշտադիտարկումը մարզի տարածքում.
- աջակցում են բնակավայրերի, տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում վտանգավոր արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխման նորմերի իրականացմանը.
- ապահովում են շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների անվտանգ և հուսալի շինարարության նորմերի իրականացումը.
- ապահովում են վտանգավոր օբյեկտների և մարդկային կուտակումներով գործունեության անվտանգության ապահովման նորմերի իրականացումը.
- աջակցում են աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ մարզի բնակչության կրթության և իրազեկման, ուսուցման և վարժանքների իրականացման գործընթացին.
- ապահովում է ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումների պլանավորումը.
- ապահովում են աղետի գոտում հասարակական կարգի, բնակչության կենսագործունեությունն ապահովող և կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացման գործընթացների պլանավորումը.
- պլանավորում են աղետի գոտում բնակչության բժշկական սպասարկման գործընթացը:

**Հոդված 21. Տարածքային կառավարման մարմինների (մարզպետներ) իրավասությունը արտակարգ  իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ՝**

1. Տարածքային կառավարման մարմինները արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ՝
    - կազմակերպում են մարզի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.
    - սահմանված կարգով ապահովում է իր աշխատողների ազդարարումը.
    - իրագործում է իր աշխատողների տարատեղման, տարահանման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցներով ապահովման գործողությունների

պլանը.
- իր լիազորությունների շրջանակներում մշակում են աղետի գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման գործողությունների ծրագիրը և ապահովում դրա կատարումը.
- ապահովում են մարզի բնակչության իրազեկման, տեղեկատվության հասանելիության և հետադարձ կապի պլանավորումը և իրականացումը մարզային մակարդակում.
- ապահովում են աղետի գոտու շրջակա միջավայրի, խմելու ջրի, սննդամթերքի վիճակի և վարակվածության դիտարկման, զննման ու հսկողության իրականացումը.
- մարզի տարածքում աջակցում են ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումների իրականացումը.
- իրականացնում են աղետի գոտում հասարակական կարգի, բնակչության կենսագործունեությունն ապահովող և կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացման գործընթացները.
- մարզի տարածքում ապահովում են աղետի գոտում բնակչության բժշկական սպասարկման գործընթացը.
- ապահովում է մարզի տարածքի աղետի գոտում իրականացվող աշխատանքներում անհատների ներգրավումը.
- մարզի տարածքում ապահովում է աղետի գոտում բնակչության կենսաապահովման միջոցառումների և դրամական աջակցության պլանավորումն ու իրականացումը.
- մարզի տարածքում աջակցում է աղետի գոտում քաղաքացիների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների ներմուծման և արտահանման կանոնակարգման պլանավորումն ու իրականացումը.
- ստեղծում են արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողով, ապահովում են մասնակցություն աղետի հետևանքների վերացման կառավարման ու ազգային աջակցման մարմինների աշխատանքներին.
- մարզի տարածքում կազմակերպում են կարիքների գնահատման և աղետի գոտում վաղ վերականգնման միջոցառումների պլանավորման և իրականացման գործընթացները:

**Հոդված 22. Տարածքային կառավարման մարմինների (մարզպետներ) իրավասությունը հետաղետային վերականգնման ուղղությամբ**

1. Տարածքային կառավարման մարմինները հետաղետային վերականգնման ուղղությամբ

- աջակցում են միջազգային մարդասիրական օգնության հայտի մշակմանը մարզի համար, մարզի տարածքում ապահովում են միջազգային արագ արձագանքման թիմերի, հումանիտար բեռների և ուղեկցող անձնակազմի ներգրավման պլանավորումը և աջակցում է իրականացմանը.
- աջակցում է մարզի տարածքում կորած անձանց որոնման, հայտնաբերման և ընտանիքի հետ միավորման աշխատանքները, կազմակերպում են դիակների ճանաչման և հուղարկավորման ախատանքները.
- կազմակերպում են պետական սեփականություն հանդիսացող գույքի, նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային հավաքման և օգտագործման գործընթացին.
- իրենց իրավասության սահմաններում աջակցում են աղետի գոտում ոչ պետական սեփականություն համարվող գույքի ժամանակավոր տիրապետման և օգտագործման գործընթացին.
- իրենց իրավասության սահմաններում աջակցում են աղետի գոտում կարանտինային, սանիտարահամաճարակային, անասնահամաճարակային և մշակաբույսերի զանգվածային հիվանդությունների վերացման միջոցառումների իրականացմանը.
- իրենց իրավասության սահմաններում աջակցում են աղետի գոտու վերականգնմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակմանը և ներգրավվում դրանց իրականացմանը՝ համաձայն հաստատված պլանի.
- կազմակերպում և ապահովում են վնասի և կորուսների գնահատման գործընթացը մարզային մակարդակում.
- համակարգում են հետաղետային վերականգնմանն ուղղված միջոցառումների միասնական ծրագրի մշակումն ու իրականացումը.
- համակարգում և վերահսկում են տնտեսական գործունեության, բնակարանային ֆոնդի և բնականոն կենսագործունեության վերականգնման աշխատանքները.
- համակարգում և վերահսկում են հետաղետային վերականգնման միջոցառումներին ուղղված ռեսուրսների ներգրավումը.
- կազմակերպում և աջակցում է հետաղետային վերականգնման և վերակառուցման գործընթացներում շինարարական աղբի, արդյունաբերական և քիմիական թափոնների համար առավելագույն անվտանգ տեղամասերի հատկացման, թափոնների մեկուսացման ու վերացման աշխատանքներին.
- կազմակերպում են կրթության շարունակականության ապահովումը սահմանված կարգով.
- աջակցում է պատմամշակութային կոթողների, հուշարձանների և մշակութային արժեքների հետաղետային վերականգնման ծրագրի իրականացմանը.
- իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 23. Համայնքի ղեկավարի իրավասությունը աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ**

1. Համայնքի ղեկավարը աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ՝

- համայնքի տարածքում իրականացնում են աղետների ռիսկի գնահատման գործընթացը.
- իրականացնում է աղետների ռիսկի տեղեկատվության հավաքագրումն ու տրամադրումը.
- համայնքային մակարդակում ապահովում է զարգացման ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառումը, ապահովում իրականացումն ու վերահսկումը.
- մշակում և հաստատում է աղետների ռիսկի կառավարման համայնքային պլանը, ներկայացնում համաձայնեցման լիազոր մարմնին, ապահովում կիրարկումն ու վերահսկումը.
- համայնքի տարածքում ապահովում է ազդարարման միասնական համակարգի ստեղծման գործընթացը և համակարգի անխափան աշխատանք.
- համայնքի տարածքում ապահովում է բնակավայրերի, տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում վտանգավոր արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխման նորմերի իրականացումը.
- համայնքի տարածքում ապահովում է համայնքային ենթակայության շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների անվտանգ և հուսալի շինարարության նորմերի իրականացումը.
- համայնքի տարածքում ապահովում է վտանգավոր օբյեկտների և մարդկային կուտակումներով գործունեության անվտանգության ապահովման նորմերի իրականացումը.
- համայնքի տարածքում ապահովում է աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ համայնքի բնակչության կրթության և իրազեկման, ուսուցման և վարժանքների իրականացման գործընթացը.
- սահմանված կարգով, իր լիազորությունների շրջանակներում, ապահովում է արտակարգ իրավիճակներին արձագանքելու պլանների մշակումը և փորձարկումը համայնքի տարածքում.
- ապահովում է համայնքի բնակչության իրազեկման, տեղեկատվության հասանելիության և հետադարձ կապի պլանավորումը համայնքային մակարդակում.
- համայնքի տարածքում իրականացնում է կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացման գործընթացների պլանավորումը.
- համայնքի տարածքում պլանավորում է աղետի գոտում բնակչության բժշկական սպասարկման գործընթացը.
- համայնքի տարածքում ապահովում է միջազգային արագ արձագանքման թիմերի, հումանիտար բեռների և ուղեկցող անձնակազմի ներգրավման պլանավորումը և աջակցում է իրականացմանը:

**Հոդված 24. Համայնքի ղեկավարի իրավասությունը արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ**

1.Համայնքի ղեկավարը արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ՝

- սահմանված կարգով համայնքի տարածքում ապահովում է համայնքի բնակչության ազդարարումը.
- իրագործում է արտակարգ իրավիճակների արձագանքման, համայնքի բնակչության տարհանման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցներով ապահովման գործողությունների պլանը.
- համայնքի տարածքում իրենց լիազորությունների շրջանակներում մշակում է աղետի գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման գործողությունների ծրագիրը և ապահովում դրա կատարումը.
- ապահովում է համայնքի բնակչության իրազեկման, տեղեկատվության հասանելիության և հետադարձ կապի իրականացումը համայնքային մակարդակում.
- կազմակերպում են փրկարարական աշխատանքներ համայնքի տարածքում.
- համայնքի տարածքում իր լիազորությունների շրջանակներում ապահովում է աղետի գոտու շրջակա միջավայրի, խմելու ջրի, սննդամթերքի վիճակի և վարակվածության դիտարկման, զննման ու հսկողության իրականացումը.
- համայնքի տարածքում ապահովում է ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումների պլանավորումն ու իրականացումը.
- համայնքի տարածքում ապահովում է աղետի գոտում հասարակական կարգի, բնակչության կենսագործունեությունն ապահովող և կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացման գործընթացների իրականացումը.
- համայնքի տարածքում ապահովում է աղետի գոտում բնակչության բժշկական սպասարկման գործընթացը.
- ապահովում է համայնքի տարածքի աղետի գոտում իրականացվող աշխատանքներում անհատների ներգրավումը.
- համայնքի տարածքում ապահովում է աղետի գոտում բնակչության կենսաապահովման միջոցառումների և դրամական աջակցության պլանավորումն ու իրականացումը.
- համայնքի տարածքում աջակցում է աղետի գոտում քաղաքացիների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների ներմուծման և արտահանման կանոնակարգման պլանավորումն ու իրականացումը.
- համայնքի տարածքում կազմակերպում է կարիքների գնահատման և աղետի գոտում վաղ վերականգնման միջոցառումների պլանավորման և իրականացման գործընթացները.
- աջակցում է համայնքի համար միջազգային մարդասիրական օգնության հայտի մշակման գործընթացին.
- համայնքի տարածքում աջակցում է միջազգային արագ արձագանքման թիմերի, հումանիտար բեռների և ուղեկցող անձնակազմի ներգրավման

գործընթացի իրականացմանը.
- աջակցում է համայնքի տարածքում կորած անձանց որոնման, հայտնաբերման և ընտանիքի հետ միավորման աշխատանքները, կազմակերպում են դիակների ճանաչման և հուղարկավորման ախատանքներ.
- համայնքի տարածքում կազմակերպում է պետական սեփականություն հանդիսացող գույքի, նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային հավաքման և օգտագործման գործընթացին.
- համայնքի տարածքում կազմակերպում է աղետի գոտում ոչ պետական սեփականություն համարվող գույքի տիրապետման և օգտագործման գործընթացը.
- համայնքի տարածքում օժանդակում է կապի հանրապետական, գերատեսչական, տեղական և այլ ցանցերի առաջնահերթ օգտագործման գործընթացը.
- համայնքի տարածքում սահմանված կարգով աջակցում է աղետի գոտում կարանտինային, սանիտարահակահամաճարակային, անասնահամաճարակային և մշակաբույսերի զանգվածային հիվանդությունների վերացման միջոցառումների իրականացմանը:

**Հոդված 25. Համայնքի ղեկավարի իրավասությունը հետաղետային վերականգնման ուղղությամբ**

1.Տեղական ինքնակառավարման մարմինները հետաղետային վերականգնման ուղղությամբ

- համայնքի տարածքում աջակցում է աղետի գոտու հետաղետային վերականգնմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակմանը և ներգրավվում դրանց իրականացմանը՝ համաձայն հաստատված պլանի.
- արտակարգ իրավիճակում կազմակերպում և ապահովում է կորուստների և վնասի գնահատման գործընթացը համայնքային մակարդակում.
- համայնքի տարածքում համակարգում և վերահսկում է տնտեսական գործունեության և բնականոն կենսագործունեության վերականգնման աշխատանքները.
- համայնքի տարածքում համակարգում և վերահսկում է հետաղետային վերականգնման միջոցառումներին ուղղված ռեսուրսների ներգրավման և կառավարման գործընթացը.
- համայնքի տարածքում կազմակերպում, աջակցում և ապահովում է հետաղետային վերականգնման և վերակառուցման գործընթացներում շինարարական աղբի, արդյունաբերական և քիմիական թափոնների

համար առավելագույն անվտանգ տեղամասերի հատկացման, թափոնների մեկուսացման ու վերացման աշխատանքներին.
- համայնքի տարածքում կազմակերպում են կրթության շարունակականության ապահովումը սահմանված կարգով.
- համայնքի տարածքում աջակցում է պատմամշակութային կոթողների, հուշարձանների և մշակութային արժեքների հետաղետային վերականգնման ծրագրի իրականացմանը.
- իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 26. Կազմակերպությունների իրավասությունը աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ**

1. Կազմակերպություններն աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ՝

- կազմակերպության տարածքում իրականացնում է աղետների ռիսկի գնահատման գործընթացը.
- կազմակերպության տարածքում իրականացնում է իր գործնեության հետևանքով հնարավոր աղետների ռիսկի տեղեկատվության հավաքագրումն ու տրամադրումը.
- ապահովում է աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառումը իր զարգացման ծրագրերում, ապահովում դրանց իրականացումն ու վերահսկումը.
- մշակում և հաստատում են աղետների ռիսկի կառավարման պլանը, և ներկայացնում է լիազոր մարմնի համաձայնեցմանը, ապահովում կիրարկումն ու վերահսկումը.
- կազմակերպության տարածքում ապահովում է ազդարարման միասնական համակարգի ստեղծման գործընթացը և համակարգի անխափան աշխատանքը
- կազմակերպությունը իր գործունեության առանձնահատկություններից ելնելով ապահովում է մանրամասն հատակագծման նախագծերում վտանգավոր արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխման նորմերի իրականացումը իր տարածքում.
- կազմակերպությունն ապահովում է իր սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների անվտանգ և հուսալի շինարարական նորմերի իրականացումը.
- կազմակերպությունը, իր գործունեության առանձնահատկություններից ելնելով, ռիսկային գոտում գտնվող ազդակիր համայքների և խոշորացված համայնքներում ընդգրկված  բնակավայրերի համար ստեղծում է ազդարարման համակարգ և ապահովում է անխափան աշխատանքը.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով ապահովում է բնական, տեխնոլոգիական, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական վտանգների մշտադիտարկումն ու հսկողության կազմակերպումը.
- ապահովում է կազմակերպության աշխատողների ուսուցման և

վարժանքների իրականացման գործընթացը.

- ապահովում է արտակարգ իրավիճակներում գործելու պլանների մշակումը և գործարկումը կազմակերպության տարածքում.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով կազմակերպության տարածքում ապահովում է ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումների պլանավորումը.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով ապահովում է բնակչության կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացման գործընթացների պլանավորումը.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով պլանավորում է աղետի գոտում բնակչության բժշկական սպասարկման գործընթացը,
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով ապահովում են աղետի գոտում քաղաքացիների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների ներմուծման և արտահանման կանոնակարգման պլանավորումը:

**Հոդված 27. Կազմակերպությունների իրավասությունը արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ**

1. Կազմակերպությունները արտակարգ իրավիճակներում արձագանքման և վաղ վերականգնման ուղղությամբ՝

- իրականացնում են իրենց աշխատողների պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.
- աջակցում են փրկարարական և անհետաձգելի աշխատանքների իրականացմանը և ստեղծում են անհրաժեշտ ուժեր՝ համապատասխան աշխատանքներ կատարելու համար.
- կարևորագույն նշանակության օբյեկտներն ապահովում են հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության անհապաղ ազդարարումը և պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով.
- սահմանված կարգով կազմակերպության տարածքում ապահովում է իր աշխատողների ազդարարումն ու իրազեկումը.
- սահմանված կարգով, իր գործունեության առանձնահատկություններից ելնելով ապահովում են արտակարգ իրավիճակներում գործելու պլանների գործարկումը կազմակերպության տարածքում.
- իրագործում է կազմակերպության աշխատողների տարատեղման, տարհանման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցներով ապահովման գործողությունների պլանը.
- կազմակերպության տարածքում՝ իր գործունեության առանձնահատկություններից ելնելով, ապահովում է շրջակա միջավայրի, խմելու ջրի, սննդամթերքի վիճակի և վարակվածության դիտարկման, զննման ու հսկողության իրականացումը.
- կազմակերպության տարածքում իր գործունեության առանձնահատկություններից ելնելով ապահովում է ճառագայթային,

քիմիական ու մանրէաբանական նյութերից բնակչության պաշտպանության հատուկ միջոցառումների իրականացումը.

- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով ապահովում է կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացման գործընթացների իրականացումը.
- իրենց լիազորությունների սահմաններում ապահովում է աղետի գոտում բնակչության բժշկական սպասարկման գործընթացը.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով ապահովում է աղետի գոտում բնակչության կենսաապահովման միջոցառումների պլանավորումն ու իրականացումը.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով ապահովում է աղետի գոտում քաղաքացիների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների ներմուծման և արտահանման կանոնակարգված իրականացումը.
- ապահովում է կազմակերպության կայուն գործունեությունը և աշխատանքների անընդհատությունն ու շարունակականությունը,
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով աջակցում են կարիքների գնահատման և աղետի գոտում վաղ վերականգնման միջոցառումների պլանավորման և իրականացման գործընթացներին:

**Հոդված 28. Կազմակերպությունների իրավասությունը հետաղետային վերականգնման ուղղությամբ**

1. Կազմակերպությունները հետաղետային վերականգնման ուղղությամբ՝

- աջակցում է միջազգային արագ արձագանքման թիմերի, հումանիտար բեռների և ուղեկցող անձնակազմի ներգրավմանը.
- իրականացնում է կորած անձանց որոնման, առաջնահերթ առավել խոցելի խմբերի հայտնաբերման և ընտանիքի հետ միավորման աշխատանքները.
- օժանդակում է պետական և/կամ ոչ պետական սեփականություն հանդիսացող գույքի, նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային հավաքման և օգտագործման գործընթացին.
- աջակցում է աղետի գոտում ոչ պետական սեփականություն համարվող գույքի ժամանակավոր տիրապետման և օգտագործման գործընթացին.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով օժանդակում և իրականացնում է կապի հանրապետական, գերատեսչական, տեղական և այլ ցանցերի առաջնահերթ օգտագործումը.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով օժանդակում է աղետի գոտում կարանտինային, սանիտարահամաճարակային, անասնահամա-ճարակային և մշակաբույսերի զանգվածային հիվանդությունների վերացման միջոցառումների իրականացմանը.
- կազմակերպության տարածքում, իր գործունեության առանձնահատկություններից ելնելով, աջակցում է աղետի գոտու վերականգնմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակմանը և

ներգրավվում դրանց իրականացմանը՝ համաձայն հաստատված պլանի.

- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով արտակարգ իրավիճակում կազմակերպում և ապահովում է կորուստների և վնասի գնահատման գործընթացը կազմակերպության մակարդակում.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով մասնակցում կամ օժանդակում է հետաղետային վերականգնմանն ուղղված միջոցառումների միասնական ծրագրի իրականացմանը.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով սահմաններում մասնակցում կամ օժանդակում է տնտեսական գործունեության, բնակարանային ֆոնդի և բնականոն կենսագործունեության վերականգնման աշխատանքներին.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով մասնակցում կամ օժանդակում է հետաղետային վերականգնման միջոցառումներին ուղղված ռեսուրսների ներգրավմանը.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով աջակցում է հետաղետային վերականգնման և վերակառուցման գործընթացներում շինարարական աղբի, արդյունաբերական և քիմիական թափոնների համար առավելագույն անվտանգ տեղամասերի հատկացման, թափոնների մեկուսացման ու վերացման աշխատանքներին.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով իրականացնում է կրթության շարունակականության ապահովումը սահմանված կարգով.
- իր գործունեության առանձնահատկություններից ելնելով աջակցում կամ իրականացնում է պատմամշակութային կոթողների, հուշարձանների և մշակութային արժեքների հետաղետային վերականգնման ծրագիրը.
- իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

**ԳԼՈՒԽ 6**

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ**

**Հոդված 29. Արտակարգ իրավիճակ հայտարարելու հիմքերը**

1. Արտակարգ իրավիճակ կարող է հայտարարվել Հայաստանի Հանրապետության տարածքում աղետի առաջացման, կամ աղետի առաջացման անմիջական սպառնալիքի դեպքերում:

2. Արտակարգ իրավիճակ՝ ըստ նշանակության կարող է հայտարարվել նաև Հայաստանի Հանրապետությունում կամ նրա առանձին տարածքում արտակարգ կամ ռազմական դրության իրավական ռեժիմների հայտարարման ժամանակ:

**Հոդված 30. Արտակարգ իրավիճակ հայտարարելը**

1. Արտակարգ իրավիճակ հայտարարում է՝

1) Վարչապետը՝ հանրապետական, մարզային կամ համայնքային բնույթի արտակարգ իրավիճակի պարագայում՝

ա. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարի առաջարկությամբ.

բ. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմնի ղեկավարի առաջարկությամբ.

2) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմնի ղեկավարը՝ մարզային, համայնքային կամ տեղական բնույթի արտակարգ իրավիճակի պարագայում՝

ա. համայնքի ղեկավարի առաջարկությամբ.

բ) լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարի առաջարկությամբ.

գ) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման այլ մարմնի ղեկավարից ստացված տեղեկատվության հիման վրա.

դ) կարևորագույն նշանակության օբեյկտի, կազմակերպության ղեկավարի կամ հերթապահի (օպերատիվ հերթապահի, կարգավարի, ավագ կարգավարի) զեկույցի հիման վրա.

3) Հայաստանի Հանրապետության համայնքի ղեկավարը՝ համայնքային կամ տեղական բնույթի արտակարգ իրավիճակի պարագայում ՝

ա) լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարի առաջարկությամբ.

բ) կարևորագույն նշանակության օբյեկտի, կազմակերպության ղեկավարի կամ հերթապահի (օպերատիվ հերթապահի, կարգավարի, ավագ կարգավարի) զեկույցի հիման վրա.

2. Որոշակի տարածքում արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում գործում է արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմը:

**Հոդված 31. Արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին որոշման բովանդակությունը**

1. Արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին որոշումը պետք է ներառի`

ա) հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները.

բ) հայտարարելու անհրաժեշտության հիմնավորումը.

գ) այն տարածքի սահմանները, որտեղ հայտարարվում է արտակարգ իրավիճակ.

դ) արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմն ապահովող միջոցները և ուժերը.

ե) կիրառվող միջոցառումների իրականացման համար պատասխանատու պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք.

զ) ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները:

2. Արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին որոշումը ենթակա է անհապաղ հրապարակման հեռուստատեսությամբ, ռադիոյով, մամուլով և այլ միջոցներով:

**ԳԼՈՒԽ 7**

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

**Հոդված 32. Արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմում իրականացվող միջոցառումները**

1.Արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում իրականացվում են հետևյալ միջոցառումները `

- ստեղծված իրավիճակի, հետևանքների և հակազդման կարողությունների գնահատման, համարժեք արձագանքման և աղետ առաջացնող խոցող գործոնների ու հետևանքների վերացման աշխատանքերի կազմակերումը.
- արձագանքման գործընթացում ներգրավված կառավարման մարմինների և ծառայությունների ուժեղացված և (կամ) շուրջօրյա աշխատանքային ռեժիմի անցման ապահովումը.
- արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմ հայտարարելու մասին որոշման ընդունումն ու համապատասխան վարչական տարածքների և դրանցում ռեժիմի առանձնահատկությունների սահմանումը.
- արձագանքման, ստեղծված իրադրության գնահատման և հետևանքների վերացման աշխատանքների կազմակերպումը.
- կառավարման մարմինների, արտակարգ իրավիճակների հանձնաժողովների, օպերատիվ շտաբերի (խմբերի), լիազոր մարմնի ճգնաժամային կառավարման ազգային և տարածքային կենտրոնների (ներգրավման դեպքում՝ շարժական կառավարման կետերի) միջև ներդաշնակ աշխատանքի կազմակերպումն ու արդյունավետ կառավարման ապահովումը.
- ստեղծված իրադրության, վարվելականոնների, ժամանակավոր սահմանափակումների, մշտադիտարկման և կանխատեսումների, հետևանքների վերացման գործընթացի, հասցված վնասների և կորուստների մասին բնակչության, շահագրգիռ կառավարման մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների, զանգվածային լրատվամիջոցների իրազեկման և տեղեկատվական հոսքերի արդյունա-վետ կառավարման ապահովումը.
- հասարակական կարգի, հատուկ, կարևորագույն օբյեկտների պահպանման կազմակերպումը.
- արտակարգ իրավիճակի գոտում բնակչության կենսապահովման կազմակերպումը.
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համապատասխան պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովումը.
- սույն մասում թվարկված միջոցառումների և գործընթացների անխափանությունն ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների պլանավորումն և հատկացման ապահովումը:

**Հոդված 33. Արտակարգ իրավիճակի ռեժիմն ապահովող մարմինները**

1. Արտակարգ իրավիճակի ռեժիմն ապահովելու նպատակով օգտագործվում են արտակարգ իրավիճակների, պաշտպանության, առողջապահության, շրջակա միջավայրի ոլորտների համակարգող պետական կառավարման մարմինների, ոստիկանության, պետական կառավարման համակարգի այլ մարմինների ու կազմակերպությունների ուժերն ու միջոցները` սույն օրենքով սահմանված արտակարգ իրավիճակի ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած կարգով:

**Հոդված 34. Արտակարգ իրավիճակներում կիրառվող ժամանակավոր սահմանափակումները և կիրառվող միջոցների սահմանները**

1.Արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմ հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի, տարածքային կառավարման մարմնի ղեկավարի, համայնքների ղեկավարների որոշմամբ իրավական ռեժիմի գործելու ժամանակահատվածում և տարածքում կարող են կիրառվել հետևյալ միջոցներն ու սահմանափակումները՝

- արտակարգ իրավիճակի կամ աղետի գոտում տեղաշարժման ազատության սահմանափակում, ինչպես նաև նշված տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի (այդ թվում՝ կարանտինային) սահմանում.
- բնակչության կենսագործունեության, հատուկ պահպանվող օբյեկտների և տրանսպորտի գործունեությունն ապահովող, բնակչության կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար առավել վտանգ ներկայացնող օբյեկտների պաշտպանություն, ինչպես նաև բնական ռեսուրսների օգտագործման սահմանափակումներ.
- արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմին համապատասխանող ֆինանսական, վարկային, հարկային, մաքսային, սահմանային, բանկային և տեղեկատվական պետական հատուկ քաղաքականության իրականացում, ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների, ներառյալ՝ ծառայությունների մատուցման, ապրանքների և ֆինանսական միջոցների շրջանառության սահմանափակումներ.
- արտակարգ իրավիճակի կամ աղետի գոտում կապի միջոցների, այդ թվում՝ ռադիոկապի և ռադիոհաճախականությունների կիրառման սահմանափակումներ.
- սննդամթերքի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ծեռքբերման և շրջանառության հատուկ կարգի սահմանում.
- արտակարգ իրավիճակի կամ աղետի գոտում քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերի ստուգում և տրանսպորտային միջոցների ու անձնական իրերի զննության իրականացում.
- պարետային ժամի սահմանում՝ առանց անձը հաստատող փաստաթղթերի և հատուկ թույլտվության հասարակական վայրերում գտնվելու արգելմամբ.
- արտակարգ իրավիճակի կամ աղետի գոտում պայթյունավտանգ, քիմիապես և մանրէաբանական վտանգավոր նյութեր կիրառող արդյունաբերական օբյեկտների և կազմակերպությունների գործունեության կասեցում.
- նյութական և մշակութային արժեքների տարհանում, եթե առաջացել է դրանց կորստի, ոչնչացման կամ վնասման սպառնալիք.
- ֆիզիկական անձանց և կազմակերպությունների տրանսպորտային միջոցների, ինժեներական տեխնիկայի ու այլ անհրաժեշտ գույքի, սարքերի, սարքավորումների ներգրավումը՝ տարհանման, փրկարարական, վթարավերականգնողական և հետևանքների վերացման գործընթացում:

2.Արտակարգ իրավիճակի պայմաններում իրականացվող միջոցառումները և ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները, պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների փոփոխությունները, ինչպես նաև կազմակերպություններին առաջադրվող լրացուցիչ պարտավորությունները պետք է իրականացվեն այն սահմաններում, որոնք ապահովում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջները և համարժեք են այդ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներին, ինչպես նաև պետք է համապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին և բխեն արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորություններից:

**Հոդված 35. Արտակարգ իրավիճակի գործողության դադարումը**

1.Արտակարգ իրավիճակ հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման դեպքում այն կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցվել այդ որոշումը ընդունող մարմնի որոշմամբ, որի մասին բնակչությունն իրազեկվում է սույն օրենքով սահմանված կարգով, իսկ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակումները վերանում են դադարեցման հետ միաժամանակ, առանց այդ մասին հատուկ իրազեկելու:

## ԳԼՈՒԽ 8

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

**Հոդված 36. Քաղաքացիների և կազմակերպությունների** փոխհատուցման հիմքերը

1. Արտակարգ իրավիճակ հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներից կամ դրանց հետևանքների վերացման գործողություններից տուժած ֆիզիկական անձինք և կազմակերպություններն իրավունք ունեն ստանալու կրած վնասների փոխհատուցում, ինչպես նաև՝ ճշգրիտ տեղեկություն արտակարգ իրավիճակների, դրանց առաջացման վտանգի և իր պաշտպանվածության աստիճանի մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Արտակարգ իրավիճակներում ֆիզիկական անձանց, (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին) և կազմակերպությունների սեփականության իրավունքով պատկանող գույքի ժամանակավոր տիրապետումը կամ օգտագործումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել նախնական համարժեքի փոխհատուցմամբ (միայն կյանքի փրկության հետ կապված փրկարարական աշխատանքների նպատակահարմար իրականացման համար)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**Գ Լ ՈՒ Խ 9**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Հոդված 37.** Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, բացառությամբ՝ առավել խոցելի խմբերի (հղիներ, կերակրող մայրեր, երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձիք և հատուկ կարիքներ ունեցող անձիք), պարտավոր են մասնակցել արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացմանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Գ Լ ՈՒ Խ 10**

**ԲԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**

**Հոդված 38.** Օրենքից բխող բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման գործողությունների իրականացման նյութատեխնիկական ապահովումն ու ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

**Գ Լ ՈՒ Խ 11**

**ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ**

**Հոդված 39. Եզրափակիչ մաս**

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:
2. 2**.** Սույն օրենքը ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՕ-265 օրենքը: